

### ՀՐԱՅՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար- գլխավոր քարտուղար,  
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի դոկտորանտ

## ՕՐԵՆՍԳԻՐ ՈՒ ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԻՍԱՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ

Հոդվածում Ֆինլանդիայի Հանրապետության օրինակով անդրադարձ է կատարվում կիսանախագահական հանրապետությունում օրենսդիր ու գործադիր իշխանության փոխազդեցության առանձնահատկություններին: Այս համատեքստում քննարկվում են նաև նախագահի լիազորությունները:

*Հիմնարարներ – Ֆինլանդիայի Հանրապետություն, կիսանախագահական կառավարման ձև, օրենսդիր ու գործադիր իշխանություններ, պառլամենտարիզմ, նախագահ, վարչապետ, կառավարություն:*

Մեր կարծիքով, որպեսզի ավելի լավ հասկանանք Ֆինլանդիայում օրենսդիր ու գործադիր իշխանությունների փոխազդեցությունը և այն հատուկ դիրքը, որ ունի վարչապետը՝ որպես կառավարության գլուխ՝ մի կողմից, և որպես միայն ինստիտուտի գլուխ, որի պարտականության մեջ է մտնում նախագահի կողմից ընդունված որոշումների նախապատրաստումն ու իրականացումը՝ մյուս կողմից, հարկավոր է դիտարկումը սկսել 1919թ. Ֆինլանդիայի սահմանադրության ընդունման ժամանակաշրջանից: Սահմանադրության նախապատրաստման համար պատասխանատու փորձագետների հանձնաժողովը մտադիր էր Ֆինլանդիայում հաստատել կառավարման դասական խորհրդարանական ձևը: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ այդ ժամանակ չէին սպասում, որ Ֆինլանդիան կդառնա անկախ պետություն. Ֆինլանդիան պետք է կապված մնար Ռուսաստանի հետ: Պատմության մեջ տեղի ունեցած կտրուկ շրջադարձերի արդյունքում Ֆինլանդիան, այնուամենայնիվ, 1917թ. ստացավ անկախություն, և խորհրդարանի օրակարգ մտավ հարց՝ դիտարկելու այն դրույթները, որոնց հիման վրա Ֆինլանդիան դարձել էր խորհրդարանական պետություն: 1918թ. քաղաքացիական պատերազմում «սպիտակ» հաղթողները, մասնավորապես՝ աջ թևը, փորձ արեցին վերականգնել միապետական համակարգը: Սակայն Ֆինլանդիայի միապետականների ամենահամարձակ ծրագիրը պետք է դառնար եռակուսակցական երկիրն առանց պառլամենտարիզմի՝ ԱՄՆ-ի մոդելով, սակայն գործադիր իշխանությունը պետք է պատկաներ միայն միապետին: Խորհրդարանը դիտարկելու համար ուներ միապե-

տական կառավարման երկու տարբերակ: Առաջինը միապետական սահմանադրության օրինակ էր, որ ուներ կոշտ շրջանակներ, իսկ երկրորդը ձգտում էր համադրել միապետությունը և պառլամենտարիզմը: Այնուամենայնիվ, չատանալով սահմանադրությամբ պահանջվող (ձայների) մեծամասնություն, միապետականները հրաժարվեցին միապետություն հաստատելու գաղափարից: Իրենց հերթին, նրանք, ովքեր կողմնակից էին հանրապետությանը, չկարողացան իրացնել դասական պառլամենտարիզմի հիմնական մոդելը: Արդյունքում ընդունվեց որոշում փոխզիջմամբ. միապետությունից հրաժարումը և պառլամենտարիզմի որոշակի մակարդակի ընդունումը հավասարակշռվեցին, երբ հանրապետության նախագահին տրամադրվեցին լայն լիազորություններ պետության գլխի գործառույթներն իրականացնելու համար: Այսպիսով, մեր կարծիքով, 1919թ. գործող Սահմանադրությունը հասկանալի է միայն այդ լիազորությունների երկակիության (դուալության) տեսանկյունից:

Մի կողմից՝ հաստատվեց հզոր նախագահական իշխանություն (ինչը սահմանափակվեց 1991թ. բարեփոխումից հետո), մյուս կողմից՝ պառլամենտարիզմ:

Երկիշխանությունը կրկին ի հայտ է գալիս այն իրավիճակում, երբ կա նախագահ և խորհրդարան, բայց չկա մեծամասնությունը, ինչը տեղի ունի Ֆինլանդիայում՝ սկսած 1919 թվականից, Պորտուգալիայում՝ 1976-1979թթ.: Տվյալ դեպքում նախագահական լիազորությունների «ձեռնոց» գոյություն ունի, սակայն դրա դերը բացված է: Դրա արդյունավետությունը նվազում է, ինչը հիմնականում հանգեցնում է այնպիսի նախարարների խորհրդի ձևավոր-

ման, որը զուրկ է քաղաքացիների մեծամասնության աջակցությունից:

Հոգնածության ու ընտրական արշավների ծախսերի հետ կապված վախը թույլ է տալիս որոշ ժամանակով ստանալ խորհրդարանի համաձայնությունը՝ ստեղծելու մեծ կամ փոքր նախագահական կաբինետներ, սակայն սա բավարար չէ ո՛չ իրական գործունեության, ո՛չ էլ նախարարական անկայունության հաղթահարման համար: Հատկանշական է այն, որ Ֆինլանդիայում և Պորտուգալիայում կառավարությունների կյանքի միջին ժամկետը գրեթե նույնն է՝ մեկ տարի:

Ֆինլանդիայում մինչև 1991-1995թթ. բարեփոխումները պետության գլուխն ուներ հետևյալ լիազորությունները: Նա կառավարության առաջարկությունները ներկայացնում էր խորհրդարանի դիտարկմանը, վավերացնում և ստորագրում էր խորհրդարանի կողմից հավանության արժանացած օրենքները: Նախագահը նաև իրականացնում էր խորհրդարանից անկախ օրենսդիր իշխանություն: Նա իրավունք ուներ տալ հրամաններ.

- 1) վարչական ակտերով,
- 2) օրենքների ի կատար ածմանն ուղղված շտապիչ որոշումների վերաբերյալ,
- 3) պետական սեփականության կառավարման վերաբերյալ,
- 4) վարչական հաստատությունների ու հասարակական ինստիտուտների կազմակերպման ու գործունեության վերաբերյալ:

Ըստ Կառավարման ձևի 33-րդ պարագրաֆի՝ նախագահը որոշում էր Ֆինլանդիայի հարաբերությունները արտասահմանյան պետությունների հետ, այսինքն՝ իրականացնում էր գերագույն իշխանություն արտաքին քաղաքականության մեջ, սակայն խորհրդարանի համաձայնությամբ: Ֆինլանդիայի նախագահը օժտված է զինված ուժերի գերագույն հրամանատարությամբ, սակայն պատերազմի ժամանակ կարող է այս պաշտոնը տալ ուրիշի (Կառավարման ձև, պարագրաֆ 30): Նա ունի համաներում կատարելու իրավունք (պարագրաֆ 29), իրականացնում է նշանակումներ ամենակարևոր պետական պաշտոններին, նշանակում է Պետխորհրդի անդամներին, արդարադատության նախարարին, Գերագույն և Գերագույն վարչական դատարաններին, նախագահին ու անդամներին, արքեպիսկոպոսին ու եպիսկոպոսներին, նահանգապետներին, դեսպաններին և շատ այլ պետական ծառայողներին:

Ֆինլանդիայի նախագահը քաղաքականապես պատասխանատու չէ, այսինքն՝ նրան չեն կարող ազատել պաշտոնից, երբ նա գալիս է պաշտոն-

նի՝ ըստ նպատակահարմարության 19 սկզբունքների. նա կարող է օրենքով պատասխանատվություն կրել միայն ծայրահեղ դեպքերում: Իր մասնավոր կյանքում նա նույնպես ենթակա է քրեական օրենքին:

Ըստ 1991-1995թթ. նախորդած Կառավարման ձևի՝ նախագահը որոշում էր կառավարության բոլոր կարևորագույն գործերը, սակայն իր որոշումն ընդունում էր Պետական խորհրդում՝ ըստ այն նախարարի զեկույցի, ում վերահսկողության ներքո էր գտնվում դիտարկվող հարցը, և այս որոշումը պետք է ստորագրվեր տվյալ նախարարի կողմից, ով դրանով իր վրա էր վերցնում «այն փաստաթղթի ճշգրտության պատասխանատվությունը, որով ձևակերպվում էր որոշումը»:

Ի տարբերություն Ֆրանսիայի՝ Ֆինլանդիայում նախագահը երբեք հանդես չի եկել խորհրդարանական մեծամասնության փաստացի առաջնորդի դերում: Բանն այն է, որ Ֆինլանդիայում այդ մեծամասնությունը միշտ բազմագույն է եղել, ուստի՝ թույլ փոխկապված: Սա թույլ է տվել Ֆ. Տիբոյին ֆինլանդական բազմակուսակցականությունը բնութագրել «անկայուն» և անգամ «չկազմակերպված»: 1991-1995թթ. բարեփոխման արդյունքում Կառավարման ձևում և Էդուսկունտի մասին ակտում արձանագրվեցին փոփոխություններ՝ կապված Պետական խորհրդի իրավունքների ընդլայնման հետ՝ ի հաշվի նախագահական լիազորությունների: Իր գործողությունների մեծ մասը նախագահն այժմ պետք է իրականացնե՛ր Պետական խորհրդի համաձայնությամբ: Օրինակ՝ Գերագույն դատարանի, նահանգապետերի, գործադիր իշխանության տարբեր գերատեսչությունների առաջնորդների նշանակումը, ովքեր ավելի վաղ գտնվում էին պետության գլխի բացառիկ իրավասության ներքո, այժմ պետք է նրա կողմից իրականացվի պետական խորհրդի և, ամենից առաջ, վարչապետի առաջարկությամբ: Իսկ դեսպանների ու կոնսուլների նշանակումն ամբողջությամբ տրվել է Պետական խորհրդի տնօրինությանը: Միևնույն ժամանակ հատակորեն իրացվել է պաշտոնների անհամատեղելիության սկզբունքը: Այսպես, պատգամավորները չեն կարող որևէ պաշտոն զբաղեցնել գործադիր իշխանության մեջ:

Կառավարման ձևն ուժեղացրեց խորհրդարանի դերը՝ դնելով առաջին տեղում պետական մարմինների համակարգում: Այսպես, վարչապետի նշանակումը և Պետական խորհրդի ձևավորումը պետք է պետության գլխի կողմից իրականացվի Էդուսկունտի նախագահի և խորհրդարանի քաղաքական կուսակցությունների խմբակների առաջ-

նորոգների համաձայնությամբ:

Այսպիսով, ամրագրվեց պառլամենտարիզմի սկզբունքներից մեկը՝ կառավարության ձևավորում խորհրդարանի ուժերի հարաբերակցության հիման վրա:

Սահմանադրական օրենքների հետագա փոփոխությունները, ի հաշիվ նախագահի լիազորությունների, ընդլայնեցին Էդուսկունտի իրավունքները հատկապես ֆինանսական ոլորտում: Մինչև 1992թ. նախագահն ինքն էր Էդուսկունտ ներմուծում պետական բյուջեի նախագիծը, որը Ֆինլանդիայում օրենք չի համարվում, ուստի այդ նախագիծը քննարկվում է խորհրդարանում հատուկ ընթացակարգով և նախագահի կողմից նույնպես ստորագրվում է հատուկ ընթացակարգով՝ համաձայնեցված Պետական խորհրդի հետ: Պատգամավորների՝ նախագծի հետ կապված բոլոր առաջարկությունները միավորվում էին .պայմանականների հետ խմբում, որը նախագահը կարող էր ուշադրության չառնել: Ըստ Էդուսկունտի մասին Ակտի փոփոխությունների՝ խորհրդարանն իրավունք ունի հաղթահարել նախագահական վետոն բյուջեի .պայմանական մասով՝ իր լիակազմ նիստում՝ պատգամավորների առաջարկությունները կրկին ընդունելու եղանակով:

Նշված փոփոխություններն էականորեն սահմանափակեցին պետության գլխի դերը: Այնուամենայնիվ, ի տարբերություն խորհրդարանական հանրապետությունների, որոնցում նախագահի լիազորությունները կրում են անվանական բնույթ, Ֆինլանդիայում նախագահը պահպանեց իրավունքների մեծ ծավալ, կարող է զգալի ազդեցություն ունենալ քաղաքական կյանքի վրա, հատկապես՝ արտաքին քաղաքականության ոլորտում:

Ֆինլանդիայի որոշ պետական գործիչներ (օրինակ՝ հայտնի քաղաքագետ ու բանկիր Մ. Յակոբսենը) առաջ քաշեցին Ֆինլանդիայի սահմանադրական պատմությունը, Ֆրանսիայի օրինակով, երեք խոշոր ժամանակաշրջանների բաժանելու գաղափարը՝ Ֆինլանդիայի առաջին<sup>2</sup>, երկրորդ ու երրորդ Հանրապետությունների՝:

Այս բաժանման հիմքում ընկած էին ոչ այնքան սահմանադրության էական փոփոխությունները, որքան սահմանադրական պրակտիկայի փոփոխությունները: Պարզվում է՝ ժամանակաշրջանների այս բաժանումն արժանի է ուշադրության, թեկուզ՝ որոշ վերապահումներով:

Առաջին հանրապետության ժամանակաշրջանը սկսվում է 1919թ. և ավարտվում է 1944թ.: Այն նշանավորվել է երկրի երեք հիմնական օրենքների (այնուհետև՝ նաև չորրորդի) ընդունմամբ: Սա ոչ

ժողովրդավարական քաղաքական վարչակարգի ժամանակաշրջան էր, երբ գոյություն ունեին սահմանափակումներ քաղաքացու իրավունքների ու ազատությունների նկատմամբ, հետապնդումներ «անցանկալի» պատգամավորների նկատմամբ: Հատկապես պետք է նշել 30-ական թթ., երբ երկրում տարածվեց «Մեծ Ֆինլանդիայի» գաղափարը:

*Երկրորդ հանրապետության ժամանակաշրջան (1944-1989թթ.):* 1946թ. ԽՍՀՄ-ի հետ զինադադարի ու հաշտության պայմանագրի կնքումից հետո սկսվեց երկրի քաղաքական կյանքի ժողովրդավարացման լայն գործընթացը: Երկրի արտաքին քաղաքականության հիմնական գիծը դարձավ «Պասսիվի-Կեկոնենի գիծը» (հրաժարում որևէ ռազմական բլոկի միանալուց): 70-ական թթ. հարց առաջացավ սահմանադրության արմատական բարեփոխման մասին, սակայն Ֆինլանդիայի նախագահը դեռևս Ու. Կեկոնենն էր, և այն չիրականացավ: Պետական խորհուրդը առաջվա նման ձևավորվում էր նախագահի կողմից՝ ձախ և կենտրոնամետ կուսակցությունների բլոկի ներկայացուցիչներից: Արտաքին քաղաքականություն իրականացնելիս նա գրեթե հաշվի չէր առնում աջ քաղաքական ուժերի կարծիքը: Կեկոնենի պաշտոնաթող լինելուց և այս պաշտոնում Մ. Կոյվիստոյի ընտրվելուց հետո ձախ բլոկի դիրքերն էականորեն տեղի տվեցին: Իրենց գործունեությունն ակտիվացրին ԱԿԿ (Ազգային կուլիցիոն կուսակցություն) և այլ բուրժուազիական կուսակցությունները:

Կեկոնենի հեռացումով ավարտվեց Ֆինլանդիայի սահմանադրության զարգացման երկրորդ փուլը: Պետական-իրավական ու քաղաքական ոլորտում սկսվեց արմատական շրջադարձ, որը կարելի է անվանել Երրորդ Հանրապետության ժամանակաշրջանի սկիզբ: Ակնհայտորեն սկսեցին ամրապնդվել առևտրա-տնտեսական ու քաղաքական հարաբերություններն Արևմուտքի հետ, ինչի արդյունքում Ֆինլանդիան մտավ Եվրոպական Միություն: Փոխվեց քաղաքական ուժերի հարաբերակցությունը, խորհրդարանի կազմը:

Պետական խորհուրդը սկսեց ձևավորվել բուրժուազիական կուսակցությունների բլոկի ու ՖՄԿԿ (Ֆինլանդիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցություն) ներկայացուցիչներից: Մ. Կոյվիստոյի՝ իշխանության գալուց հետո նախագահի դերը երկրի ներքաղաքական կյանքում զգալիորեն թուլացավ: Նա Պետական խորհրդին զիջեց ներտնտեսական ու ներքաղաքական գործառնությունների իրականացումը՝ իրեն թողնելով գլխավորապես արտաքին քաղաքականության գործառնությունները: Սրա

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

արդյունքը եղավ 1991-1995թթ. սահմանադրական բարեփոխումը, որը ուժեղացրեց խորհրդարանի և Պետական խորհրդի իրավունքները՝ ի հաշվի Ֆինլանդիայի նախագահի իրավունքների, փոփոխություններ առաջ բերեց նախագահական ընտրության կարգի և նրա պատասխանատվության բնույթի մեջ: Չնայած վերը նշվածներին՝ գոյություն ունեն որոշ գծեր, որոնք մշտական են Ֆինլանդիայի քաղաքական համակարգի համար և որոնք հատուկ են նրա զարգացման բոլոր փուլերին: Դրանք են համամասնական ներկայացուցչականության սկզբունքը, քաղաքական կուսակցությունների մեծաթիվ լինելը, երկրի կառավարման համար կոալիցիայի ստեղծման անհրաժեշտությունը: Ոչ մի քաղաքական ուժ երկրում չի հանդիսանում անվերապահ գերակշռող, ուստի փոխգիշումն ու կոնսենսուսն են բնութագրում կառավարության ու խորհրդարանի աշխատանքի հիմնական մասը: Ֆրանսիայում 1958թ. Սահմանադրությամբ հանրապետության նախագահը դարձավ գլխավոր գործիչը երկրի քաղաքական-պետական մեխանիզմում, իսկ 1962թ. բարեփոխմամբ՝ երկրի գլխի ուղղակի համընդհանուր ընտրությունների ներմուծմամբ՝ ավելի ուժեղացավ նրա դերը պետության քաղաքական կյանքում, ի տարբերություն Ֆինլանդիայի, որտեղ նախագահի ուղղակի ընտրությունների ներմուծումը համընկավ պետության գլխի դերի ընդհանուր թուլացման հետ: Ֆրանսիայի նախագահը, ստանալով Նախարարների խորհրդում նախագահելու իրավունք (հոդված 9), դարձավ գործադիր իշխանության փաստացի գլուխ: Սրանով 1958թ. սահմանադրությունը փոխեց գործադիր իշխանության կառուցվածքը:

Արժե նշել, որ, եթե ուղղակի քվերակությամբ նախագահի ընտրությունների ներմուծումը Ֆրանսիայում հանգեցրեց պետության գլխի դերի ուժեղացման, ապա Ֆինլանդիայում, ընդհանակառակը՝ թուլացրեց: Այստեղ սովորաբար ձևավորվում է այնպիսի իրավիճակ, երբ «վարչապետը ղեկավարում է նվազախումբը, սակայն, ամեն դեպքում երաժշտությունը գրում է նախագահը», այսինքն՝ պետության գլուխը հիմնականում պատասխանատու է ընդհանուր, ռազմավարական հարցերի լուծման համար, այն դեպքում, երբ վաչապետը պատասխանատու է ամենօրյա, պրակտիկ կառավարման համար<sup>3</sup>:

Այսպիսով, մեր կարծիքով, հարկավոր է անել որոշ հետևություններ: Թե՛ Ֆինլանդիայում, (սկսած 1994 թվականից), թե՛ Ֆրանսիայում, (սկսած 1962 թվականից) նախագահներն ընտրվում են ուղղակի համընդհանուր քվերակությամբ և սահմանադրու-

թյամբ օժտված են հետևյալ իրավունքներով՝ միջազգային պայմանագիր կնքելու իրավունք, խորհրդարանի կողմից ընդունվող օրենքի նկատմամբ վետոյի իրավունք, խորհրդարանը ցրելու իրավունք, (Ֆինլանդիայում՝ վարչապետի համաձայնությամբ), վարչապետին և այլ բարձրագույն պաշտոնատար անձանց նշանակելու իրավունք (Ֆինլանդիայում՝ միայն Էդուսկունտի նախագահի և խորհրդարանական խմբակների համաձայնությամբ): Իսկ Ֆրանսիայում նախագահն ունի Նախարարների խորհրդում նախագահելու իրավունք և դրանով էլ դարձավ գործադիր իշխանության փաստացի գլուխը: Ֆինլանդիայի ու Ֆրանսիայի նախագահների դիրքում ևս մեկ կարևոր տարբերություն է այն, որ Ֆինլանդիայում նախագահը երբեք հանդես չի եկել խորհրդարանական մեծամասնության առաջնորդի դերում: Պրակտիկայում, համեմատվող կիսանախագահական հանրապետություններում պետության գլխի լիազորությունների իրական ծավալը զգալի չափով կախված է երկրի ներսում ուժերի դասավորությունից, ինչն էլ որոշում է, թե ինչպիսին կլինեն սահմանադրության «ընթերցումները» (ավելի մոտ խորհրդարանական մոդելին կամ ընդհակառակը՝ նախագահականին), ինչը թույլ է տալիս սահմանադրության նորմերը հարմարեցնել տարբեր հանգամանքների: Եվ, ինչպես արդեն ասվել է վերևում, այն դեպքում, երբ համընկնում են նախագահական ու խորհրդարանական մեծամասնությունը, գործադիր իշխանության ոլորտում անվերապահ առաջնորդությունը պատկանում է նախագահին, իսկ վարչապետին ու կառավարությանը մնում է նախագահի կողմից ընդունված որոշումների իրականացումը: Նախագահին ընդդիմադիր կուսակցությունների կամ բլոկի՝ խորհրդարանական ընտրություններում հաղթանակը կտրուկ մեծացնում է գործադիր իշխանության երկվությունը և հանգեցնում է պետության գլխի փաստացի իրավասությունների սահմանափակման, նրա քաղաքական մանևրների ազատության նեղացման: Այս առնչությամբ մեծ նշանակություն է ձեռք բերում երկրում գործող կուսակցական համակարգը: Ի սկզբանե՝ թե՛ ֆիննական, թե՛ ֆրանսիական բազմակուսակցական համակարգերը փոխկապված են եղել հասարակության սոցիալ-տնտեսական կառուցվածքին, որն (այդ հասարակությունը) ունի երկու բևեռ՝ աշխատանք ու կապիտալ: Այնուամենայնիվ, սկանդինավյան սոցիալական մոդելն ունի նաև երրորդ բևեռը՝ բաժանումը գյուղական ու քաղաքային շահերի: Աշխատանքի ու կապիտալի կոնֆլիկտի շուրջ ձևավորված քաղաքական կազմակերպություն դարձավ Սոցիալ-

դեմոկրատական կուսակցությունը, իսկ «քաղաքա-  
յին ու գյուղական» կոնֆլիկտի շուրջ ձևավորվածը՝  
Ագրարային կուսակցությունը:

Նախագահին ու խորհրդարանին տրված է  
օրենսդրական նախաձեռնության իրավունք: Նա-  
խագահն այս իրավունքն իրացնում է՝ խորհրդա-  
րանին ներկայացնելով Պետական խորհրդի կող-  
մից նախապատրաստված առաջարկությունները:  
Էդուսկունտի մասին օրենքի պարագրաֆ 28-ում  
ասվում է, որ «հանրապետության նախագահը  
Էդուսկունտի դիտարկմանն է ներկայացնում կառա-  
վարության առաջարկությունները»:

Առաջարկությունները, որոնք չեն կարող ար-  
վել այս ժամանակ, կարող են ավելի ուշ ներկայաց-  
վել: Օրինաստեղծման գործում կառավարությունն  
առաջատար դիրք է զբաղեցնում: Նրա առաջար-  
կությունները, ի տարբերություն խորհրդարանի  
կողմից նախաձեռնվողների, չեն սահմանափակ-  
վում ժամանակով և այլ պայմաններով: Կառավա-  
րության առաջարկությունները առաջնահերթ են  
խորհրդարանի կողմից դիտարկվելիս և սովորա-  
բար ընդունվում են: Այս կարգը բնական է և սովո-  
րական պրակտիկա է կառավարման խորհրդարա-  
նական ձևն ունեցող հանրապետություններում, որ-  
տեղ կառավարության խնդիրն է հանդիսանում  
խորհրդարանին առաջարկություններով ապահո-  
վելը և նրա աշխատանքն ուղղորդելը: Անգամ ֆոր-  
մալ առումով խորհրդարանի նախաձեռնության  
իրավունքը երկրորդային է համարվում: 1991-  
1995թթ. բարեփոխման արդյունքում էականորեն  
փոխվել են Էդուսկունտի վերահսկիչ լիազորու-  
թյունները: Ընդլայնվել է պետական խորհրդի ու  
դրա վարչակազմի գործունեության նկատմամբ ֆի-  
նանսական վերահսկողությունը: Այս նպատակով  
էր, որ ավելի վաղ խորհրդարանն ընտրում էր Ֆին-  
լանդիայի Բանկի լիազորներին, սակայն, ըստ  
Էդուսկունտի մասին օրենքի պարագրաֆ 8-ի՝ այժմ  
նրանք ավելի ակտիվորեն են ազդում դրա կառա-  
վարման գործունեության վրա: Էդուսկունտն ընտ-  
րում էր հատուկ հսկիչներ, որոնք ունեին պետական  
բյուջեի նախագիծը (ծախսերի նպատակահարմա-  
րության առարկան), դրա իրականացման հաշտ-  
վետվությունն ստուգելու իրավունք, սակայն բյու-  
ջեն քիչ էր կախված պատգամավորների որոշում-  
ներից: Էդուսկունտը ձևավորեց հատուկ Պետա-  
կան հսկիչ գերատեսչություն, որի խնդիրներից է  
բյուջեի համակարգային ստուգումը, լրացուցիչ  
հատկացումների նախագծի վերաբերյալ հաշվետ-  
վություններ տալը և այլն, վերահսկողությունը երկ-  
րի տնտեսության զարգացման նկատմամբ:

Գործադիր իշխանության գործունեության

նկատմամբ վերահսկողության իրավունք ունեն  
նաև Էդուսկունտի մշտական հանձնաժողովները:  
Այսպես՝ արտաքին գործերի մշտական հանձնա-  
ժողովը վերահսկողություն է իրականացնում կա-  
ռավարության ու հատուկ գերատեսչությունների  
արտաքին քաղաքականության նկատմամբ: Նա  
իրավունք ունի ստուգել հաշվետվությունները, անել  
իր դիտողությունները ստուգումների արդյունքում:  
Կառավարության կողմից կնքված բոլոր միջազգա-  
յին պայմանագրերը, որոնք կարևոր նշանակու-  
թյուն ունեն երկրի համար կամ վերաբերում են  
Էդուսկունտի իրավասությանը, պարտադիր տր-  
վում են խորհրդարանի վավերացանք: Այս հարցի  
շուրջ եզրակացություն կարող է տալ նշված մշտա-  
կան հանձնաժողովը: Ընդլայնվել են նաև խորհր-  
դարանի օմբուդսմենի վերահսկիչ իրավունքները:  
Համաձայն Կառավարման ձևի պարագրաֆ 49-ի  
նոր հրատարակության՝ օմբուդսմենը վերահսկում է  
ոչ միայն գործադիր, այլ նաև դատական իշխանու-  
թյան գործունեության օրինականության պահպա-  
նումը: Ընդ որում, «օրինականություն» հասկացու-  
թյունը շատ լայն է մեկնաբանվում. այն իրենից  
ներկայացնում է իր (օմբուդսմենի) լիազորություն-  
ների օգտագործում, հետևում իրավական նորմե-  
րին, դրանց աստիճանակարգությանը, բարի նոր-  
մերի հետ ոչ համատեղելի աշխատանքային մե-  
թոդների չկիրառություն և այլն: Այս պաշտոնյայի  
պարտականություններից է օրինականությանը  
հետևելը այնպիսի հարցերում, որոնք վերաբերում  
են պետական ու ռազմական ծառայողներին, բան-  
տում գտնվող մարդկանց բողոքներին ու խնդրագ-  
րերին: Այս պաշտոնը ներմուծվել է 1919թ.՝ Կառա-  
վարման ձևի դրույթով, սակայն հատուկ կարևորու-  
թյուն չի ունեցող միջոցազմական ժամանակաշրջա-  
նում: Այնուամենայնիվ, առաջվա մման սահմա-  
նադրությունն օրինականության նկատմամբ վե-  
րահսկողության ոլորտը հստակորեն տարանջա-  
տում է օմբուդսմենի և արդարադատության կանց-  
լերի միջև. վերջինս ներկայացնում է գործադիր իշ-  
խանությունը և գտնվում է կառավարության կազ-  
մում:

Սակայն այժմ արդարադատության կանցլերը  
նույնպես հաշվետու է խորհրդարանին՝ օրինակա-  
նությանը հետևելու ստուգումների արդյունքների  
վերաբերյալ: Երկուսի իշխանությունն էլ տարած-  
վում է բոլոր պետական հաստատությունների  
վրա՝ սկսած վարչական մեքենայի գազափոց մինչև  
տեղական ինքնակառավարման մարմիններ: Ֆին-  
լանդիայի վարչապետի իրավասությունը պետք է  
դիտարկել երեք տարբեր կողմերից: Կրկին, մեր  
կարծիքով, պետք է լուսաբանել այն լիազորություն-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ները, որ ունի վարչապետը ըստ սահմանադրության մեջ ամրագրված նորմերի, այնուհետև դիտարկել, թե ինչպես է պառլամենտարիզմի՝ Կառավարման ձևի պարագրաֆ 36-ով սահմանված սկզբունքն ազդում վարչապետի իրավական կարգավիճակի վրա և ուսումնասիրել լիազորությունների իրացման այն նոր եղանակները, որոնք առաջանում են քաղաքական էվոլյուցիայի արդյունքում:

Սահմանադրությամբ վարչապետը քիչ լիազորություններ ունի սեփական որոշումներ ընդունելու համար: Կառավարման ձևը ելնում է այն փաստից, որ վարչապետը նախագահում է Պետական խորհրդի լիակազմ նիստերը՝ նախապատրաստելով և իրականացնելով նախագահի որոշումները: Մյուս կողմից՝ նախագահի նախագահության ներքո գտնվող Պետխորհրդում, որտեղ պետք է լինեն առնվազն հինգ նախարարներ, վարչապետը իրավական տեսանկյունից որևէ արտոնյալ դիրք չունի այլ նախարարի նկատմամբ:

Բացի այդ՝ կառավարության գլուխը նախագահում է որոշ միջնախարարական հանձնաժողովների նիստեր, սակայն այս դրույթը նույնպես նրան չի տալիս որոշումների ընդունման այնպիսի լիազորություն, որը կտարբերվեր այլ նախարարների իրավասություններից:

Վարչապետը փոխարինում է հանրապետության նախագահին, երբ նա հիվանդության կամ ուղևորության պատճառով չի կարող կատարել իր պարտականությունները: Չնայած փոխարինման ժամանակ վարչապետն ունի նախագահի իշխանություն, սակայն այդ իշխանությունը երբեք չի օգտագործվում սեփական քաղաքական նպատակներով:

Վարչապետը ղեկավարում է ոչ թե նախարարությունները, այլ Խորհրդի վարչական ծառայությունները (կանցելարիաներ), որոնք, այնուամենայնիվ, հասարակության զարգացումը պլանավորելու կարևոր մարմին են: Կանցելարիաների տնօրենի՝ իր այս որակով կառավարության գլուխը կարող է կիրառել իր ողջ իշխանությունը կամ իր լիազորությունները պատվիրակել կանցելարիայի աստիճանավորներին:

Որոշ հետազոտողներ հարց են առաջ քաշել խորհրդարանի վստահությունը վայելող վարչապետին՝ պաշտոնից ազատելու նախագահի իրավունքի վերաբերյալ: Այստեղ կարծիքները տարբեր են, և տեսականորեն հարցը մնում է չլուծված: Հեղինակների մեծ մասը, ովքեր հետազոտել են այս հարցը, կարծում են, որ բացի խորհրդարանի վստահությունից՝ վարչապետը և ողջ կառավարությունը պետք է վայելեն նախագահի վստահություն:

Սահմանադրությամբ հենց նախագահն է նշանակում բոլոր նախարարներին և նրանց ազատում իրենց պարտականություններից: Այլ հեղինակներ էլ պնդում են, որ, ելնելով պառլամենտարիզմի սկզբունքից, նախագահը չի կարող պաշտոնից ազատել խորհրդարանի վստահությունը վայելող վարչապետին, կամ՝ կառավարությանը<sup>4</sup>: Համոզիչ նախադեպ է ստեղծվել նախագահ Մ. Կոյվիստոյի կողմից, ով 1981թ., երբ իրականացնում էր վարչապետի գործառույթները, հրաժարվեց ենթարկվել նախագահի կամքին: Ու. Կեկկոնենը պահանջեց Կոյվիստոյի հրաժարականը, չնայած՝ վերջինս իր տրամադրության տակ ուներ խորհրդարանի վստահությունը:

Պառլամենտարիզմի իրավական համակարգը Կառավարման ձևում այսպես է սահմանվել. «Պետական խորհրդի անդամները պետք է վայելեն Էդուսկունտի վստահությունը» (պարագրաֆ 36): Վարչապետն այստեղ չի հիշատակվում:

Եթե կառավարությունն ստանում է խորհրդարանի անվստահության քվեն, նախագահի ղեկավարությամբ բանակցություններ են սկսվում նոր կառավարության ձևավորման շուրջ: Բանակցությունների վարումը դրվում է ոչ թե այն մարդու ուսերին, ով պատասխանատու է կառավարությունների խորհրդակցության կամ ձևավորման համար, այլ այն մարդու, ով գործում է ըստ հանրապետության նախագահից ստացված լիազորությունների ու ցուցումների: Կառավարության ձևավորումից հետո այդ մարդը նշանակվում է կառավարության գլուխ: Այսպիսով, բանակցությունների յուրաքանչյուր փուլում հայտնի է, թե ով է ապագա վարչապետը, եթե բանակցությունները հաջող անցնեն: Սա ուժեղացնում է բանակցություններ վարողի դիրքերը՝ նրան առանցքային դեր տալով այնպիսի հարցերի կարգավորման մեջ, որոնք կապված են նախարարների ընտրության ու ծրագրի հետ:

Պետք է նշել, որ ընդհանրապես կառավարության ձևավորման կարգը մեծապես որոշվում է կառավարման ձևով: Ամենաընդհանուր առումով կարելի է առանձնացնել կառավարության ձևավորման երկու հիմնական մոդելներ՝ խորհրդարանական հիմքով, որը բնորոշ է խորհրդարանական կառավարման ձև ունեցող երկրներին, և արտախորհրդարանական եղանակով, որը բնորոշ է նախագահական հանրապետություններին: Կիսանախագահական կառավարման ձև ունեցող կառավարությունն ամենից հաճախ ձևավորվում է ֆորմալ ձևով՝ արտախորհրդարանական եղանակով, սակայն հաշվի է առնվում ուժերի դասավորությունը խորհրդարանում:

Երբ կառավարությունը ձևավորվում է և հանձն է առնում իր պարտականությունները, վարչապետը ոչ միայն ապահովում է իր նախագահությունը, այլ նաև համաձայն պառլամենտարիզմի սկզբունքի, դառնում է կառավարության քաղաքական ղեկավարը: Սա պարզ է դառնում, երբ խոսվում է կոալիցիոն կառավարության մասին, որը սովորաբար ձևավորվում է Ֆինլանդիայի բազմակուսակցական քաղաքական համակարգում, որտեղ վարչապետի հիմնարար խնդիրը բանակցությունների վարումն է՝ կառավարության ու այլ խմբերի տարածայնությունները վերացնելու նպատակով: Սրանով էլ կառավարության ու խորհրդարանական խմբերի միջև բանակցությունները սովորաբար ընթանում են վարչապետի նախագահությամբ: Քանի որ նա, որպես կանոն, ներկայացնում է խոշոր կուսակցություններից մեկը, նրա խորհրդարանական ազդեցությունը ուժեղացնում է կառավարության գլխի իրական ազդեցությունը: Իսկ նախագահը, ավանդույթի ուժով, կառավարության ներքաղաքական գործողություններին խառնվում է միայն ծայրահեղ դեպքերում: Այս պրակտիկան, որն ավելի է ուժեղացել 1991-1995թթ. բարեփոխումների արդյունքում, Ֆինլանդիայի վարչապետի կարգավիճակը մոտեցնում է իր այն կոլեգաների կարգավիճակին, որոնք ներկայացնում են խորհրդարանական կառավարման ձևն ունեցող պետություններ:

Վերը նշված բոլոր փաստերը զգալիորեն ուժեղացնում են կառավարության գլխի դիրքերը՝ այն դերի առումով, որը նրան տրվում է օրենքով և վերաբերում է խորհրդարանի, զանգվածային լրատվամիջոցների ու նախագահի հետ փոխգործակցությանը:

Համաձայն խորհրդարանական սկզբունքի՝ խորհրդարանի վստահությունը վայելող կառավարության՝ պաշտոնից հեռացվելու սպառնալիքը հանդիսանում է միջոց՝ նախագահի անկախ քաղաքականության (կառավարության ու խորհրդարանի քաղաքականությունից տարբերվող) վրա ներգործելու համար:

Հանրապետության նախագահի կողմից ընդունվող որոշումները կապակցված են Պետական խորհրդին, քանի որ համաձայնեցվում են նրա հետ: Բացի այդ՝ նախագահը շատ դժվարությամբ է իրականացնում նշված որոշումները, եթե նա չունի մեծամասնության կառավարություն, այլ կա միայն փոքրամասնության կամ տեխնիկական կառավարություն: Մեծամասնության կառավարությունը ուժեղացնում է վարչապետի դիրքը: Ընդհանրապես, անկախության հռչակումից սկսած՝ կարելի է առանձնացնել հինգ տիպի կաբինետներ՝

- 1) համընդհանուր կոալիցիա,
- 2) մեծամասնության կոալիցիա,
- 3) փոքրամասնության կոալիցիա,
- 4) միակուսակցականներ,
- 5) քաղաքականապես չեզոքներ կամ կուսակցական ներկայացուցչություններին մասամբ կապվածներ:

Ֆինլանդիայի կառավարական կոալիցիաները չեն առանձնանում իրենց կայունությամբ: Ըստ Կ. Ֆոն Բոյմի հաշվետվության՝ Ֆինլանդիայում կաբինետի «կյանքի» միջին տևողությունը 1947-1983թթ. եղել է 12,3 ամիս<sup>6</sup>: Կառավարության կուսակցական կազմը հաճախ է փոխվում խորհրդարանական ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում, սակայն կոալիցիաների ձևավորման ժամանակ կուսակցությունների հարաբերությունները բոլորովին էլ քառսային բնույթ չունեն:

Կառավարության մեջ տեղի ունեցող հաճախակի փոփոխությունները միանշանակ խանգարում են քաղաքական զարգացման անխափանությանը: Կառավարությունը չի հասցնում ծանոթանալ աշխատանքի պլաններին ու արդյունքներին, երբ արդեն պետք է պաշտոնաթող լինի: Սակայն անխափանության ամրացման է ծառայում այն, որ պաշտոնից հեռացող մեկ կամ մի քանի նախարարներ մտնում են նոր կառավարություն: Սովորաբար, Ֆրանսիայի քաղաքական կյանքի պայմանների նկարագրության համար օգտագործում են հետևյալ արտահայտությունը. «Կառավարությունը փոխվում է, սակայն նախարարներ մնում են»: Այս արտահայտությունն օգտագործում են նաև այն ժամանակ, երբ բնութագրում են ֆիննական պառլամենտարիզմի զարգացումը: Սա վկայում է այն մասին, որ առնվազն որոշ կուսակցություններում «նախարար դառնալու ունակ» մարդկանց օլիգարխիան վերահսկում է կուսակցությունների նախարարական դիրքերը: Ավելին, որոշ նախարարական պորտֆելներ շատ կառավարություններում կարող են երկար տարիներ մնալ միևնույն մարդկանց ձեռքերում:

Ֆինլանդիայի ներքաղաքական ենթատեքստը վերջին տարիներին մնացել է հարաբերականորեն կայուն, կառավարությունները եղել են մեծամասնության կառավարություններ, ինչն իր հերթին ամրացրել է կառավարության դիրքը: Այսպիսով, վերը նշվածից կարելի է անել հետևյալ հետևությունները: Նախագահն իր որոշումներն ընդունում է Պետական խորհրդում, իսկ սա, իր հերթին, նախապատրաստում է նախագահի որոշումները: Խորհրդի առաջարկությունները նախագահին ներկայաց-

վում են իրավասու նախարարի կողմից: Այնուամենայնիվ, ինչպես արդեն արձանագրել ենք, նախագահը որոշումների ընդունման ժամանակ կապակցված չէ Խորհրդի կամ նախարարի կարծիքին: Ուստի լիակատար ազատություն: Սահմանադրությունը նախագահին տալիս է դեկրետներ, թողարկելու իրավունք՝ մեծաթիվ հարցերի շուրջ, սակայն նա շատ հազվադեպ է օգտագործում իր լայն լիազորություններն օրինաստեղծման ոլորտում: Հիմնականում նա հետևում է Նախարարների խորհրդի կարծիքին: Ինչ վերաբերում է ցրելու իրավունքին, ապա որոշումը հանրապետության նախագահի կողմից ընդունվում է Պետական խորհրդում: Այժմ գործող սահմանադրության ընդունումից ի վեր ցրում իրականացվել է ութ անգամ: Ամենից հաճախ այն տեղի է ունեցել համաքաղաքական պատճառներով՝ խորհրդարանական հավասարակշռության խախտում՝ կոմունիստ պատգամավորների ձերբակալություն (1924թ.), ճգնաժամ՝ արտաքին քաղաքական հարաբերություններում (1961թ.), փակուղի՝ կուսակցությունների փոխհարաբերություններում (1953թ., 1972թ., 1975թ.):

Ֆինլանդիայի քաղաքական համակարգում կարելի է հստակ տարանջատում նկատել խորհրդարանական կառավարության և նախագահի անկախ իշխանության միջև: Ֆին հետազոտողների մեծ մասը, միջին եզրույթ գտնելու նպատակով, կենտրոնացել են երկու ծայրահեղությունների վրա. նախագահն անվերապահորեն ենթարկվում է խորհրդարանի հավակնություններին և, մյուս կողմից՝ նախագահը ամերիկյան տիպի է՝ ակտիվ քաղաքական առաջնորդ: Արդյունքում ընդունվել է «չափավոր կամ չեզոք իշխանություն» հասկացությունը, որն առաջարկվել է Բ. Կոնստանտի կողմից: Ըստ նրա՝ նախագահի իշխանությունը պետք է լինի «պահեստում» և շատ հազվադեպ օգտագործվի՝ լուրջ խնդիրներին լուծում տալու համար: Այնուհաստ է, որ պետության գլխի՝ որպես «չափավոր իշխանության», գործառությունները նոր խնդիր են առաջացնում՝ նրա չեզոքությունը կուսակցությունների նկատմամբ:

Կառավարության ու նախագահի փոխհարաբերությունները խորհրդարանի պալատների հետ մեծապես որոշվում են նրանով, թե որքանով է խորհրդարանի կուսակցական կազմը համապատասխանում Պետական Խորհրդի կուսակցական կազմին:

Ֆինլանդիայում նախագահի իշխանությունը գործում է բազմակուսակցական համակարգում: Այն ժամանակվանից ի վեր, երբ Ֆինլանդիան անկախացավ (1917թ.), չի եղել դեպք, որ որևէ կուսակ-

ցություն ունենա բացարձակ մեծամասնություն, իսկ 1906 թվականից գոյություն ունեն 5-6 կիսամշտական կուսակցություններ և մի քանի փոքր կիսանցողիկ գոյացություններ: Այսպես՝ 1999թ. մարտի 21-ի հերթական խորհրդարանական ընտրությունների ընթացքում կուսակցություններից ոչ մեկը չստացավ ձայների բացարձակ մեծամասնություն: Կառավարության ծանրակշիռ, իսկ հաճախ էլ որոշիչ դերը, ինչպես գործադիր իշխանության մեխանիզմում, այնպես էլ պետական մեխանիզմում ընդհանրապես, պրակտիկայում որոշվում է ոչ այնքան նրա ֆորմալ լիազորություններով, որքան այն փաստով, որ կառավարության կազմում, որպես կանոն, լինում են իշխող կուսակցության (կոալիցիայի) ամենաազդեցիկ գործիչները: Հենց այս պատճառով էլ կառավարությունը սովորաբար հանդիսանում է քաղաքական ակտիվության իրական կենտրոն, յուրօրինակ շարժիչ, որը շարժում է հարդորում ողջ պետական մեխանիզմին:

Այժմ, մեր կարծիքով, հարկավոր է վերը շարադրվածի հիման վրա և հաշվի առնելով 1991-1995թթ. բարեփոխման ընթացքում տեղի ունեցած փոփոխությունները՝ անել մի քանի հետևություններ՝ Ֆինլանդիայի օրենսդիր և գործադիր իշխանության փոխգործակցության վերաբերյալ: Սահմանադրական լայն բարեփոխումների արդյունքում Կառավարման ձևն ուժեղացրել է խորհրդարանի դերը՝ նրան տալով առաջին տեղը պետական մարմինների համակարգում: Այսպես՝ վարչապետի նշանակումը և Պետական խորհրդի ձևավորումը այժմ պետք է պետության գլխի կողմից իրականացվեն Էդուսկունտը նախագահողի և խորհրդարանի քաղաքական կուսակցությունների խմբակների առաջնորդների համաձայնությամբ, որոնք գոյացնում են (Էդուսկունտի մշտական կոմիտեների նախագահների և նախագահների տեղակալների հետ մեկտեղ) Նախագահողների խորհուրդ: Այսպիսով, ամրապնդվում է պառլամենտարիզմի առաջին սկզբունքը՝ կառավարության ձևավորում խորհրդարանում ուժերի հարաբերակցության հիման վրա:

Էդուսկունտը ցրել և ընտրություններ նշանակել նախագահն այժմ կարող է միայն վարչապետի նախաձեռնությամբ: Խորհրդարանի կողմից ընդհանրապես Պետական խորհրդին և առանձին նախարարին անվստահություն հայտնելու դեպքում այս որիուրդը կամ նախարարը պարտավոր են հեռանալ պաշտոնից: Բացի այդ՝ Պետական խորհրդի պաշտոնաթող լինելը կարող է իրականացվել նաև վարչապետի որոշմամբ, իսկ նախագահը միայն պետք է ձևակերպի այդ ակտը: Եթե ավելի վաղ



խորհրդարանում կառավարության ծրագրով հանդես էր գալիս նախագահը, ապա այժմ սա վարչապետի իրավասության ներքո է: Այսպիսով, ամրապնդվել է պառլամենտարիզմի երկրորդ սկզբունքը՝ Պետական խորհրդի կաբինետի քաղաքական պատասխանատվությունը խորհրդարանի առաջ:

<sup>1</sup> Տե՛ս, Стародубский Б.А. Политические режимы европейских буржуазных стран. Свердловск, 1989, С. 161.

<sup>2</sup> Մանրամասն տե՛ս, Конституции государств Европейского Союза. М., 1997.

<sup>3</sup> Տե՛ս, Nousiainen J. Bureaucratic tradition, semi-presidential rule and parliamentary government: The case of Finland // European journal of political research. Dordrecht, 1988. - Vol. 16, JN92, էջ 233:

<sup>4</sup> Տե՛ս, К. Sorsa. La situation juridique du Premier ministre de Finlande en face du President de la Republique. In: Les Regimes Semi-Présidentiels, Paris, 1986, էջ 24:

<sup>5</sup> Տե՛ս, J. Nousiainen The Finnish Political System. Harvard University Press, Cambridge, Massachusetts, 1971:

<sup>6</sup> Տե՛ս, Стародубский Б.А., նշվ. աշխ. էջ 161:

<sup>7</sup> Տե՛ս, J.-M. Jansson Le Regime semi-presidential Finlandais: dispositions légales, pratique politique. In: Les Regimes Semi-Présidentiels. Paris, 1986, էջ 108:

Грайр Товмасын

Руководитель - генеральный секретарь аппарата НА РА,  
кандидат юридических наук, доцент,  
докторант академии государственного управления РА

РЕЗЮМЕ

*Особенности взаимодействия законодательных и исполнительных властей  
в полупрезидентской республике по примеру Финляндии*

В статье по примеру республики Финляндия рассматриваются особенности взаимодействия законодательных и исполнительных властей в полупрезидентской республике. В этом контексте обсуждаются также полномочия президента.

*Ключевые слова* - Республика Финляндии, полупрезидентского форма правления, законодательные и исполнительные власти, парламентаризм, президент, премьер-министр, правительство.

Hrayr Tovmasyan

The RA NA Chief of Staff - Secretary General,  
PhD in Law, Associate Professor,  
Postdoctoral Researcher of the Public Administration Academy of RA

SUMMARY

*The specificities of interaction between legislative and executive powers in the  
semi-presidential system of government - the example of Republic of Finland*

In the article the author analyzes the specificities of interaction between legislative and executive powers through the example of Republic of Finland. Also the powers of president are discussed in this context.

*Keywords* - Republic of Finland, semi-presidential form of government, legislative and executive power, parliamentarism, president, prime minister, government.